ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 8-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Հրաման	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԳՏ 2017.02.01/4(573) Հոդ.45	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	Գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ	*Ընդունման ամսաթիվը*	16.01.2017
Ստորագրող մարմինը	Գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ	*Ստորագրման ամսաթիվը*	16.01.2017
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	11.02.2017	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՀՐԱՄԱՆԸ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԻՏԱԿԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
24 հունվարի 2017 թ.
Պետական գրանցման թիվ --------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

N 8-Ն

16 հունվարի 2017 թ.
ք. Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԻՏԱԿԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1730-Ն որոշման N 1 հավելվածի 15-րդ կետի 1-ին ենթակետով՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել՝

1) անասնաբուժասանիտարական փորձաքննության եզրակացության ձևը՝ համաձայն N 1 հավելվածի.
2) անասնաբուժասանիտարական փորձաքննության պիտակի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ի. Կարապետյան

Հավելված N 1
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության
պետական ծառայության պետի
2017 թվականի հունվարի 16-ի
N 8-Ն հրամանի

_____
(անասնաբուժասանիտարական փորձաքննություն իրականացնողի անունը, ազգանունը կամ անվանումը և գտնվելու վայրը)

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N _ _ _ _

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

«_____»_____/_____ թ.

_____ -ին
(նշել ֆիզիկական անձի անունը, ազգանունը կամ իրավաբանական անձի անվանումը կամ նրա ներկայացուցչի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները)

պատկանող և
_____
(նշել ուղեկցող անասնաբուժական փաստաթղթի համարը, տրման ամսաթիվը)

ուղեկցող անասնաբուժական փաստաթղթով սպանդի ենթարկված կենդանիները
_____
(նշել կենդանու տեսակը, քանակը՝ գլուխ)
որի արդյունքում ստացված մսեղիքից
_____
(նշել մսեղիքի տեսակը, քանակը՝ հատով և քաշը կգ-ով)
կամ
անասնաբուժասանիտարական փորձաքննության ներկայացված ոչ սպանդանոցային ծագման մսեղիքից
_____
(նշել մսեղիքի տեսակը, քանակը՝ հատով, և քաշը կգ-ով)
կամ
անասնաբուժասանիտարական փորձաքննության ներկայացված կենդանական ծագման մթերքից
_____
_____
(նշել չփաթեթավորված և չմակնշված կենդանական ծագման մթերքի՝ ձուկ, կաթ, մեղր, ձու անվանումը, քանակը՝ հատով, կգ-ով, լիտրով)

վերցված նմուշները
_____
(նշել նմուշներն ուղեկցող փաստաթղթի համարը, ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

ենթարկվել են անասնաբուժասանիտարական փորձաքննության, որի արդյունքներով

_____

_____

(նշել կատարված հետազոտությունները /զգայորոշման, մանրադիտակային, մանրէաբանական, մակաբուծաբանական, ֆիզիկաքիմիական, կենսաքիմիական և այլն/ և ստացված արդյունքները կամ ախտորոշումը)

նմուշները և անասնաբուժասանիտարական փորձաքննության ենթարկված սպանդից գոյացած մթերքի կամ ձկան կամ կաթի կամ մեղրի կամ ձվի նմուշառված խմբաքանակը՝

_____

(նշել մսեղիքի խմբաքանակը՝ հատով, քաշը կգ-ով, մսի դեպքում՝ մսի քաշը կգ-ով, ձկան, ձվի դեպքում՝ հատով կամ կգ-ով մեղրի, կաթի դեպքում՝ կգ-ով, կամ լիտրով)

(ընդգծել համապատասխան եզրակացությունը)

1. Անասնաբուժասանիտարական տեսակետից անվտանգ է և պիտանի է սննդում օգտագործելու համար առանց սահմանափակումների.

2. Անասնաբուժասանիտարական անվտանգության ապահովման համար ենթակա է օգտագործման վերամշակումից հետո. _____

_____

(նշել վերամշակման եղանակը)

3. Անասնաբուժասանիտարական անվտանգության ապահովման համար ենթակա է օգտահանման

_____

_____

(նշել վերամշակման եղանակը և օգտագործման ձևը)

4. Անասնաբուժասանիտարական անվտանգության ապահովման համար ենթակա է ոչնչացման

_____

_____

(նշել ոչնչացման եղանակը)

Անասնաբուժասանիտարական փորձաքննության եզրակացությունը տրվում է

_____

(նշել սպանդից գոյացած մթերքի կամ ձկան կամ մեղրի կամ կաթի կամ ձվի սպառման հասցեատերը՝ անունը, ազգանունը, անձնագրի տվյալները կամ անվանումը, գործունեության հասցեն)

Անասնաբուժասանիտարական փորձաքննության եզրակացությունը տվեց՝

_____ _____

(պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

Հավելված N 2
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության
պետական ծառայության պետի
2017 թվականի հունվարի 16-ի
N 8-Ն հրամանի

ՊԻՏԱԿ N _ _ _ _ _ _

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

«_____»_____/_____ թ.

_____

(անասնաբուժասանիտարական փորձաքննություն իրականացնողի անունը, ազգանունը կամ անվանումը և գտնվելու վայրը)

_____ -ին

(նշել ֆիզիկական անձի անունը, ազգանունը կամ իրավաբանական անձի անվանումը կամ նրա ներկայացուցչի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները)

պատկանող և

_____ ուղեկցող

(նշել ուղեկցող անասնաբուժական փաստաթղթի համարը, տրման ամսաթիվը)

անասնաբուժական փաստաթղթով

_____

(նշել անասնաբուժասանիտարական փորձաքննության ենթարկված մթերքի անվանումը, քանակը, քաշը (կգ-ով, լիտրով կամ հատով)

ենթարկվել է անասնաբուժասանիտարական փորձաքննության, որի եզրակացության արդյունքներով

_____

(նշել անասնաբուժասանիտարական փորձաքննության եզրակացության ամսաթիվը և համարը)

_____

(նշել մսեղիքի խմբաքանակը՝ հատով, քաշը կգ-ով, մսի դեպքում՝ քաշը կգ-ով, ձկան, ձվի դեպքում՝ հատով կամ կգ-ով, մեղրի և կաթի դեպքում՝ կգ-ով կամ լիտրով)

անասնաբուժասանիտարական տեսակետից անվտանգ է և պիտանի է սննդում օգտագործելու համար առանց սահմանափակումների:

_____ _____

(պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.